## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝** ԳԲՔԱ-ԼՕ-2019/22, 02.05.2019թ.

**Բողոք բերող անձ՝** «Արհովշին» ՍՊԸ

**Պատվիրատու՝** ՀՀ քաղաքաշինության կոմիտե

**Գնման ընթացակարգի ծածկագիրը՝** ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-19/1 գնանշման հարցում

**Գնման առարկան՝** Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի հանրակացարանային նոր մասնաշենքի կառուցման աշխատանքների ձեռքբերում

**Բողոքի պահանջը՝**

Պարտավորեցնել ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-19/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «Արհովշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը իրավերի պահանջներին չհամապատասխանող գնահատելու մասին որոշումը:

Պարտավորեցնել ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-19/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել «Արհովշին» ՍՊԸ-ին ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչելու մասին համապատասխան որոշումը:

**ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ**

**ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ժ. ՂԱԼԹԱԽՉՅԱՆ**

**Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ հղումով.**

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ

որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ

Բողոք բերող՝ «Արհովշին» ՍՊԸ

*Հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց պող. 48/2*

*շենք, բն.3 ,ՀՎՀՀ 00110978*

*Հեռ. (093) 95-52-95, էլ.փոստ.grigoryan.aramais@inbox.ru*

Պատվիրատու՝ *ՀՀ քաղաքաշինության կոմիտեն*

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

*ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կարիքներիհամար՝ Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի հանրակացարանային նոր մասնաշենքի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «**ՀՀՔԿ-ԲՄԱԾՁԲ**-19/1» ծածկագրով գնման ընթացակարգ*

ԲՈՂՈՔ

Գործի հակիրճ նկարագրությունը և բողոքի փաստերը.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կարիքների համար՝ Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի հանրակացարանային նոր մասնաշենքի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀՔԿ-ԲՄԱԾՁԲ-19/1» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետև՝ Ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել «Արհովշին» ՍՊԸ-ն :

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետև նաև Հանձնաժողով)29.03.2019թ. ժամը 11:00-ին կայացած նիստի N2 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ «Արհովշին» ՍՊԸ-ն ներկայացրել է 546,900,000 դրամ գնային առաջարկ և արձանագրության 2.1 կետով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

Հանձնաժողովը 11.04.2019թ. ժամը 11:30-ին կայացած նիստի N3-1 արձանագրության 1.1 կետի համաձայն«Արհովշին» ՍՊԸ-ի ներկայացրած որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերումարձանագրել է անհամապատասխանություններ և 1.2 կետի մասով որոշել է նախկինում կատարվածպայմանագրերի մասով «Արհովշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը գնահատել ոչ բավարարև համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ Կարգ) 47-րդ կետի ծանուցել է «Արհովշին» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Ի պատասխան ՀՀՔԿ-ԲՄԱԾՁԲ-19/1 ծածկագրով գնման ընթացակարգի 3-1 արձանագրության,<<ԱՐՀՈՎՇԻՆ>> ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է շտկված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովը 17.04.2019թ. ժամը 17:30-ին կայացած նիստի N3-3 արձանագրության 1.2 կետի համաձայն որոշում է կայացրել, որներկայացված պայմանագրերը չեն գնահատվում նախկինում կատարված պատշաճ պայմանագրեր և մերժել է «Արհովշին» ՍՊԸ-ի հայտը:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

**Բողոքի իրավական հիմքերը և ապացույցները.**

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի (այսուհետև Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսած պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Համաձայն ՀՀ կառավարության N 526-Ն որոշման 61-րդ կետի, մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը.

3) եթե գնման առարկայի նախահաշվային գինը տվյալ ընթացակարգի շրջանակում չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը կամ գնման առարկա է հանդիսանում անշարժ գույքը կամ գնման ընթացակարգը կազմակերպվում է սույն կարգի 23-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված հիմքով, ապա սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված պահանջները չեն սահմանվում հրավերով, և մասնակիցը հայտով ներկայացնում է միայն հայտարարություն համանման (նմանատիպ) պայմանագրի կատարման փորձառություն ունենալու մասին.

4) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

Հարկ ենք համարում նշել, որ համաձայն 17.04.2019թ. ժամը 17:30-ին կայացած նիստի N3-3 արձանագրության 1.1 կետի 29.03.2019թ. հարցում է ուղարկվել ՀՀ պետական եկամուտների կոմիտե (Կոմիտե) գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «Արհովշին» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով <<ֆինանսական միջոցներ>> որոկավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ: Կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ստացվել է եզրակացություն, համաձայն որի՝ «Արհովշին» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց պարտավորություններ, ինչպես նաև <<ֆինանսական միջոցներ>> որոկովորման չափանիշը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

Ինչ վերաբերվում է «Արհովշին» ՍՊԸ-ի կողմից որպես անհամապատասխանությունների շտկում ներկայացված պահանջվող փաստաթղթերին կարող ենք հիմնավորել հետևյալը.

-17.04.2019թ. ժամը 17:30-ին կայացած նիստի N3-3 արձանագրության 1.1 կետի բ) ենթակետի արձանագրված անհամապատասխանությունների ուղղում բաժնի ա) կետում ուղարկվել է ամբարձիչի վարձակալության նոր պայմանագիր և տեխնիկական վկայագիր, որտեղ արդեն իսկ նշված է պետհամարանիշը.

-նույն արձանագրության 1.1 կետի բ) ենթակետի արձանագրված անհամապատասխանությունների ուղղում բաժնի բ) կետում 3 պայմանագրերի / ԵՔ-ԳՀԱԾՁԲ-17/12, ԿՄՀՔ-ՊԸԱԾՁԲ-02/17, ՁՀԲՄ-ԱԾՁԲ-2017/2 / մասով ավարտված աշխատանքներն ընդունող հանձնաժողովի ակտերը չեն ներկայացվել, քանի որ առկա էին հաշիվ-ապրանքագրերի պատճենները և հանձնման-ընդունման արձանագրությունները,

որըրավարար պահանջ էհանդիսանումՀՀ կառավարության N 526-Ն որոշման 61-րդ կետի 2-րդ ենթակետին,

-ՁՀԲՄ-ԱԾՁԲ-2017/2 «Ջերմուկ համայնքում աջափնյա թաղամասի բակային տարածքների բարեկարգման և բակային ճանապարհների ասֆալտապատման, եզրաքարերի տեղադրման»պայմանագրի մասով Ձեր իսկ պահանջով երկրորդ անգամ ուղարկվել է նույն փաստաթուղթը (Հավելված 5), քանի որ այն տրամադրվել է մեզ ՀՏՁՀ-ի կողմից՝ պայմանագրին կից:

-ՁԲՄ-ԱԾՁԲ-2018/1 «Ջերմուկ համայնքում ձախափնյա թաղամասի բնակելի շենքերի տանիքածածկույթի շինվերանորոգման աշխատանքներ» պայմանագրի մասով Ձեր իսկ պահանջով երկրորդ անգամ ուղարկվել է նույն փաստաթուղթը (Հավելված 5), քանի որ այն տրամադրվել է մեզ ՀՏՁՀ-ի կողմից՝ պայմանագրին կից:

-ԿՄՀՔ-ՊԸԱԾՁԲ-02/17 «Հրազդան քաղաքի փողոցների կապիտալ վերանորոգման աշխատանքներ»պայմանագրի մասով չենք ներկայացվել Հավելված 4 և 4.1-ը, քանի որ Հրազդանի համայնքապետարանի կողմիցմեզ տրամադրվածպայմանագրով վերոնշյալ հավելվածներըկցված չեն եղել:

-ՁԲՄ-ԱԾՁԲ-2018/1 «Ջերմուկ համայնքում ձախափնյա թաղամասի բնակելի շենքերի տանիքածածկույթի շինվերանորոգման աշխատանքներ» պայմանագրի ընկերության կողմից ժամկետի խախտումը արդյունք է չկանխատեսված և անկախահսկելի հանգամանքների,այլ ոչ թե ընկերության անբարեխիղճ վերաբերմունքի:

Համաձայն «ՀՀՔԿ-ԲՄԱԾՁԲ-19/1» ծածկագրով գնման ընթացակարգի ՄԱՍ 1-ի 2.5 ենթակետի՝ սույն ընթացակարգի իմաստով ***նմանատիպ են համարվում սույն հրավերով պահանջվող լիցենզիայի (ներդիրների) շրջանակներում նախկինում կատարված պայմանագրերը*** (շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները):

Բացի այդ տվյալ հրավերով չի նշվում ցածր կամ բարձր ռիսկայնության աստիճանի շինարարական աշխատանքի մասին որևէ պահանջ: Մեր ներկայացրած պայմանագրերի շրջանակներում պահանջվել են այն լիցենզիաների ներդիրները, որոնք համապատասխանում են վերոնշյալ ծածկագրով գնման ընթացակարգին:

Ուստի գտնում ենք,որ հանձնաժողովի կողմից արձանագրված թերությունը կրում է ձևական, ոչ բովանդակային բնույթ, հետևաբար ընկերության հայտը այդ մասով ենթակա է բավարար գնահատման:

Նկատի առնելով վերոգրյալը՝

**Խնդրում եմ**

1. Պարտավորեցնել «ՀՀՔԿ-ԲՄԱԾՁԲ-19/1» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «Արհովշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը հրավերի պահանջներին չհամապատասխանող գնահատելու մասին որոշումը:
2. Պարտավորեցնել «ՀՀՔԿ-ԲՄԱԾՁԲ-19/1» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել «Արհովշին» ՍՊԸ-ին ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչելու մասին համապատասխան որոշում:

Առդիր ՝ «3» թերթ:

ԲՈՂՈՔ ԲԵՐՈՂ

«Արհովշին» ՍՊԸ-ի տնօրեն Արամայիս Գրիգորյան

30.04.2019թ.